ԷՎԹԱՆԱԶԻԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՊՈՂՈՍՅԱՆ Լ. Ա.

Տուժողի խնդրանքով սպանությունը արտոնյալ հանցակազմերով սպանությունների տեսակներից է, որը մի շարք երկրներում կոչվում է տուժողի համաձայնությամբ կամ կարեկցանքի շարժառիթով սպանություն: Չնայած ընկալման տարատեսակություններին, բոլոր դեպքերում խոսքը միևնույն երևույթի՝ էվթանազիայի մասին է: Այդ եզրույթը, որ ձևակերպվել է որպես թեթև մահ, առաջին անգամ առաջարկել է անգլիացի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնը (1561-1626) իր «Նոր օրգանոն» հայտնի աշխատությունում: Նա կարծում էր, որ բժշկի պարտքն է ոչ միայն վերականգնել հիվանդի առողջությունը, այլև ապահովել անբուժելի հիվանդի հանգիստ, առանց տառապանքների մահը[1]: Էվթանազիան նոր ժամանակների երևույթ չէ: Անհույս հիվանդների կամ ծանր վիրավորների կյանքին վերջ դնելը բավական տարածված երևույթ էր հին աշխարհում, մասնավորապես հին Հունաստանում: Դեռևս Պլատոնն իր «Հանրապետություն» հռչակավոր աշխատության մեջ, կանխորոշելով ցանկալի պետական կառուցվածքի հիմնական գծերը, այն կարծիքն է հայտնել, որ բժիշկները պիտի չխնամեն այն մարդուն, որն այլևս ի վիճակի չէ ապրելու, պետք է թույլ տալ, որ նա մեռնի: Նման վերաբերմունքը նպաստավոր է և՛ այդ մարդու, և՛ պետության համար: Այլ կերպ ասած՝ Պլատոնը պասիվ էվթանազիայի կողմնակից էր: Ակտիվ էվթանազիայի կողմնակիցներ էին Թոմաս Մորն ու Ֆրենսիս Բեկոնը: Նրանց կարծիքով, մահամերձ հիվանդներին բժիշկները պետք է օգնեն, որպեսզի նրանք ավելի դյուրին ու խաղաղ մահանան[2]:

Էվթանազիայի ժամանակակից՝ «գթասրտությունից մղված սպանություն» ձևակերպումը տրվել է 1980 թ., բժշկական գրականության մեջ. «Էվթանազիա» նշանակում է անբուժելի հիվանդի մահը դիտավորյալ արագացնելը՝ նրա տառապանքները դադարեցնելու նպատակով, թեթև, անցավագին, տուժողի խնդրանքի բավարարում՝ նրա վախճանն արագացնելու համար որոշակի գործողություններ կատարելով կամ անգործությամբ, այսինքն՝ կենսապահովման սարքերի անջատմամբ[3]:

Ըստ հիվանդին մահ պատճառելու եղանակի՝ տարբերում են էվ-թանազիայի երկու տեսակ՝ ակտիվ և պասիվ (բացասական): Ակտիվի դեպքում անբուժելի հիվանդին իր խնդրանքով կյանքից զրկում են դիտավորյալ, արագ և անցավագին: Պասիվի պարագայում ձեռնպահ են

---

[1] *Տե՛ս* Бэкон Ф. *Сочинения в 2 томах, т. 2, М., 1977, с. 269.*

[2] *Տե՛ս* Նալչաջյան Ա., *Մահվան հոգեբանություն կամ ինչպես է հոգին հեռանում մարմնից, Ե., 1992, էջ 24:*

[3] *Տե՛ս* Юридическая энциклопедия, *М., 2006, с. 938:*

մնում այնպիսի գործողություններից, որոնք անհրաժեշտ են հիվանդի կյանքի տևողությունը երկարացնելու համար[4]:

Ակտիվ էվթանազիան անհամատեղելի է «Հիպոկրատի երդման» հետ, որտեղ կա հստակ պարտավորություն. «Ես ոչ մեկին չեմ տա այն մահացու միջոցը, որը նա խնդրում է ինձնից և ցույց չեմ տա այնպիսի միջոցներ, որոնց օգնությամբ նա կարող է իրագործել մեռնելու իր մտադրությունը»[5]:

Բժշկության և բարոյագիտության առնչություններին վերաբերող մտքերի հանդիպում ենք միջնադարյան հայ փիլիսոփաների, բժիշկների աշխատություններում, մասնավորապես, մեծ մտածող Դավիթ Անհաղթի գործերում[6]: Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամ-յակը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մեծ շուքով նշվեց Սալոնիկում և Երևանում՝ 1980 թ.: Նա «Սահմանք իմաստասիրութեան» գրքում, շարունակելով Ներսես Մեծի մտքերը, նշում է, որ բժիշկն իրավունք չունի թույլ տալ ինքնասպանություն գործելու անբուժելի հիվանդին, որովհետև, «ինչպես լավ նավապետը փորձվում է ոչ թե խաղաղ ծովում, այլ ալեկոծության ժամանակ, նույնպես և խիզախ հոգին փորձությանն ընդառաջ է գնում»[7]: Դավիթ Անհաղթի այս մտքերը բխում են փիլիսոփայական նույն դիրքերից, որոնք արտահայտվել են Հիպոկրատի հանրահայտ երդման մեջ:

Այն բժիշկը, որ ելնելով այս կամ այն դրդապատճառից, այնու-ամենայնիվ, դրժում է իր երդումը և թույն տալիս հիվանդին, ենթարկվում է ոչ միայն «բժշկության աստվածների» և մարդկանց անեծքին, այլև վարչական պատժի, անգամ՝ մահապատժի:

Հատկանշական է, որ միջնադարյան հայ օրենսդրական մտքի ռահվիրա Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» 119 հոդվածի համաձայն, միտումով և կամ տգիտության պատճառով հիվանդի առողջությունը վնասող, նաև իրենց աշակերտներին պատշաճ գիտելիքներ չտվող բժիշկները պատժապարտ էին: Բայց առավել ուշագրավն այստեղ արարքի բնութագիրն է. «Բազումք ի բժշկաց բազում վնասս գործեն դեղօք կամ ի փորձել զդեղս յայլս, եւ կամ չարակամութեամբ սպանանեն դեղօք, եւ կամ վասն անգիտութեան զվնասակարսն տան ի դեղոց, կամ անվարժ գոլով զցաւսն ոչ գիտեն ճանաչել եւ յաղագս այնորիկ մահ գործեն հիւանդաց, կամ հեղգանան յաղագս ըստ կամաց զվարձն ոչ տալոյ եւ այնպէս վնասեն, կամ նախանձելով ընդ աշակերտս ոչ ուղիղ ուսուցանեն եւ նոքա անգիտանալով բազում արարին

---

[4] Տե՛ս **Капинус О. С.** *Эвтаназия в свете права на жизнь, М., 2006, с. 64, 70:*

5 Հիպոկրատի երդումը պատմականորեն ընդունված բարոյական և դեոնտոլոգիական (բարոյական պարտքի և պատասխանատվության տեսության) սկզբունքների ամբողջություն է, որով երդվում են բոլոր բժիշկները բժշկական գործունեություն սկսելուց առաջ: Փաստացի տվյալների համաձայն՝ տեքստի հեղինակը բժշկագիտության հայր Հիպոկրատն է կամ նրա աշակերտներից մեկը: Այս մասին տե՛ս **Աստվածատրյան Վ.,** *Բժշկական էթիկա, Ե., 1984:*

[6] *Այս մասին տե՛ս* **Դավթյան Ս. Հ.,** *Բիոէթիկայի ներածություն, Ե., 2012, էջ 213:*

[7] **Վարդանյան Ս. Ա.,** *Հայաստանի բժշկության պատմություն, Ե., 2000, էջ 35:*

վնաս, թէ այլ ինչ ախտս ցաւոց մուծին՝ եթէ ինքեանք, եթէ աշակերտօքն, - զայսոսիկ զամենեսեան կամաւորս գիտեմք[8], - ասված է այդ հոդվածում:

Հայտնի է, որ ստոիկյան փիլիսոփայության հետևորդներն արդարացնում էին ինքնասպանությունը որոշակի դեպքերում՝ սովի, մերձավորների կորստի, տարերային աղետի, մարդկային արժանապատվության ոտնահարման, անբուժելի հիվանդության, զառամախտի և այլն:

Ինչպես նշում է Ս. Վարդանյանը, վերջին երկու դեպքն ուղղակի կապ ունեն բժշկության հետ: Ըստ ստոիկների՝ «Ճիշտ է վարվում նաև նա, որ սպանում է ինքն իրեն, եթե նրա մարմինը ենթարկվել է ինչ-որ չար հիվանդության և փչացման, այդ անբուժելի ցավից ազատվելու համար»[9]:

Հայ միջնադարյան փիլիսոփաների, բժշկապետների և այլոց աշխատություններում երբևիցե չի խրախուսվում էվթանազիայի գաղափարը:

Այս խնդրին կրոնական տեսանկյունով անդրադառնալիս բախվում ենք մարդու գոյության երկու սահմաններին՝ կյանքին ու մահվանը, որոնք բովանդակում են արարչագործության առեղծվածը և Քրիստոսի խաչի խորհուրդը: Այս երկուսի միջև տարածքը պատկանում է մարդու ազատությանը, բանականությանը, իր կամքին և գործունեությանը: Այդ ազատությունը չի խաթարվում նույնիսկ Աստծո կողմից: Բայց այդ սահմաններից այն կողմ գործում է Աստծո ազատությունը, և մարդը կոչված է հարգելու այն[10]:

Առաջին և կարևոր փաստարկներից մեկը, որ առաջարկում են էվթանազիայի հակառակորդները, ունի կրոնական-բարոյական հրահանգներ՝ «Մի՛ սպանաներ»[11] և «...սիրեսցես՛ զընկեր քո իբրեւ զանձն քո»[12]: Նրանք այն համոզմանն են, որ Աստված է կյանք շնորհողը, հետևապես միայն նա իրավունք ունի որոշելու, թե երբ պետք է մարդ լքի երկրային կյանքը: Էվթանազիան հեշտ ընտրություն կարող է լինել թե՛ բժիշկների, թե՛ հիվանդի հարազատների համար: Այս առումով էվթանազիայի բարոյական թույլտվությունը մեծացնում է չարաշահումների վտանգը բժիշկների և հարազատների կողմից, որը հատկապես սրվում է անհուսալի հիվանդության ժամանակ: Բացի դրանից, կարևոր է, թե մահն արագացնելու մասին հիվանդի որոշումը որքանո՞վ է սեփական կամքի, ազատ ընտրության արտահայտություն. չէ՞որ նրա վճիռների վրա կարող են ազդել այնպիսի գործոններ, որոնք նույնիսկ նա չի գիտակցում:

Նույն բովանդակությունն ունի նաև հաջորդ փաստարկը՝ ինքնամաքրում տանջանքի միջոցով և ծանր հիվանդ մարդկանց խնամքի միջոցով փրկվելու հույս: Այս տեսանկյունից տանջանքները կապվում են մեղքերից մաքրվելու

---

[8] **Մխիթար Գոշ,** *Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 204-206:*

[9] **Վարդանյան Ս. Ա.,** *Հայաստանի բժշկության պատմություն, Ե., 2000, էջ 38:*

[10] *Տ'ես* **Юдин Б. Г., Тищенко П. Д.** *Биоэтика, М., 2005, с. 404:*

[11] *Աստվածաշունչ, Ե., 2007, Ելք, 20:13, էջ 94:*

[12] *Նույն տեղում, Ղեւտացոց, 19:18, էջ 152:*

հնարավորության հետ և բոլորովին անիմաստ չեն դառնում: Յուրաքանչյուր արարք իր վարձն ունի, հետևաբար տանջանքը կարող է ընկալվել որպես միակ հնարավորություն մեղքերը քավելու համար:

Կաթոլիկ եկեղեցին դատապարտել է կյանքի հանդեպ գործված ոճիրները, ինչպես, օրինակ՝ ցանկացած տեսակի սպանությունը, ցեղասպանությունը, արհեստական վիժեցումը, էվթանազիան կամ կամավոր ինքնասպանությունը: Կյանքը սուրբ է և Աստծո պարգև. մարդը կոչված է պահպանելու և պտղաբեր դարձնելու այն: Դավանաբանության կոնգրեգացիայի 1980 թ. «Էվթանազիայի մասին հռչակագիրը» հայտարարել է. «Անհրաժեշտ է ողջ հաստատակամությամբ ասել, որ ոչ ոք չի կարող թույլ տալ անմեղ մարդու սպանություն՝ լինի այն սաղմ կամ պտուղ, երեխա կամ հասուն մարդ, անբուժելի կամ մահացող մարդ: Բացի դրանից, ոչ ոք չի կարող պահանջել՝ կատարել այդպիսի սպանություն թե՛ իր, թե՛ որևէ մեկ այլ անձի նկատմամբ»[13]: «Թեթև մահ» հասկացությունը օգտագործվել է նաև վերոհիշյալ հռչակագրում, որտեղ ձևակերպվել է էվթանազիայի սահմանումը. «Էվթանազիա ասելով՝ հասկացվում է ցանկացած գործողություն կամ անգործություն, որն իր էությամբ կամ դիտավորությամբ հանգեցնում է մահվան: Այսինքն, իր ուղղակի նշանակությամբ՝ էվթանազիան բժշկի օգնությամբ կանխամտածված սպանությունն է»[14]: Այսպիսով, կաթոլիկ եկեղեցին այն որակում է որպես սպանություն:

Կաթոլիկ եկեղեցու ամենահայտնի փաստաթղթերից մեկը Հովհաննես-Պողոս Բ պապի 1995 թ. Evangelium vitae[15] («Կյանքի Ավետարան») կոնդակն է, որը հենվում է Սուրբ Գրքի, քրիստոնեական ավանդության և բնական օրենքի վրա՝ պաշտպանելու համար այն տեսակետը, որ էվթանազիան հեռացնում է Աստծո հաստատած կարգից, բարոյապես հավասարազոր է ինքնասպանությանը կամ սպանությանը: Այս շրջաբերական ուղերձը վերահաստատում է մարդու կյանքի արժեքը և անձեռնմխելիությունը: Միայն դրանք հիմք ունենալով՝ մարդը կգտնի արդարություն, խաղաղություն, ճշմարիտ ազատություն և երջանկություն:

Բողոքական հավատացյալների մեծամասնությունը, եթե հասկանում է, որ հիվանդի կյանքի համար անիմաստ է պայքարելը, որոշում է ընդհատել բուժումը[16]: Էվթանազիայի նկատմամբ վերաբերմունքը բողոքական եկեղեցում միանշանակ չէ: Այսպես, Գերմանիայում լյութերական եկեղեցին հիվանդի կյանքի վերջի վերաբերյալ մշակել է մանրամասն ցուցումներ,

---

[13] Pope John Paul II (1995) Evangelium Vitae, 25 March, www.vatican.va

[14] Նույն տեղում:

[15] Նույն տեղում:

[16] **Pauls M.** Hutchinson RC (2002) Bioethics for clinicians: Protestant bioethics. Can. Med. Assoc. J 166:339-344.

սակայն մերժում է էվթանազիան[17]: Մինչդեռ բողոքական ավանդությունը, օրինակ, Հոլանդիայում պաշտպանում է ակտիվ էվթանազիան:

Ուղղափառ եկեղեցին մահը չի դիտում միայն որպես կենսաբանական գործընթաց, այլ այն ընկալում է նաև իբրև խորհրդաբանություն և աստվածային օրհնություն[18]: Իրական հավատացյալի միտքը զբաղված պիտի լինի ոչ թե կյանքի և մահվան մասին որոշումներ կայացնելով, այլ՝ իր և մերձավորների համար հարատև աղոթքով: Ուղղափառ եկեղեցիները բարոյական չեն համարում որևէ բժշկական միջամտություն, որն ուղղված չէ կյանքի երկարացմանը: Հունական ուղղափառ եկեղեցու կենսաէթիկայի հանձնախումբը գտնում է. «Միշտ գոյություն ունի սխալ ախտորոշման վարկած կամ հիվանդության անկանխատեսելի ելք կամ նույնիսկ հրաշք»[19]: Այս ամենի պատճառով չի թույլատրում ո՛չ հետաձգել բուժումը, ո՛չ հրաժարվել դրանից, անգամ եթե հիվանդն է դա պահանջում: Բժիշկը պիտի կարողանա համոզել հիվանդին շարունակել այն:

Ռուս ուղղափառ եկեղեցին էվթանազիան սահմանում է, որպես ինքնասպանություն և սպանություն: Դա մարդուն հեռացնում է Աստծուց և ճշմարիտ ուղուց: Մարդիկ, որոնք մտածում են այն օրինականացնելու մասին, մեծ մեղք են գործում Աստծու դեմ: Նրանք, ովքեր նախախնամության անվան տակ անում են դա, փորձում են միջամտել Աստծու գործերին: Էվթանազիա նախաձեռնողները հակառակ են Աստծուն և փաստացի անհավատներ են: Ռուս ուղղափառ եկեղեցին էվթանազիան համարում է «թաքնված կամ բացահայտ սատանիզմ»: Հոգու տարանջատումը մարմնից, ինչ-պես նաև մարդու ծնունդը պատկանում է միայն Աստծուն, միայն նա է հարության, կյանքի և հանգստի աղբյուրը: Էվթանազիան մարդուն ապաշխարության և դարձի գալու հնարավորություն չի տալիս: Էվթանազիայի վերաբերյալ Ռուս ուղղափառ եկեղեցու առաջին պաշտոնական փաստաթղթում («Էվթանազիայի օրինականացման ժամանակակից միտումներ» (1999 թ.)) ասվում է. «Ճանաչելով յուրաքանչյուր մարդու կյանքի արժեքը, նրա ազատությունը և արժանապատվությունը, որպես եզակի արարածի՝ ստեղծված Աստծո պատկերով և նմանությամբ, ուղղափառ հոգևորականությունը, բժիշկները, գիտնականները կարծում են, որ անընդունելի է անհուսալի հիվանդ մարդկանց սպանելու մտադրությամբ էվթանազիայի օրինականացման ցանկացած փորձ, և այն համարում են սպանության մի ուրույն ձև»: Ռուս ուղղափառ եկեղեցու Եկեղեցական

---

[17] May AT (2003) Physician assisted suicide, euthanasia, and Christian bioethics: moral controversy in Germany. Christ. Bioeth. 9:273-283c.

[18] Hatzinikolaou N. (2003) Prolonging life or hindering death? An orthodox perspective on death, dying and euthanasia. Christ. Bioeth. 9:187-201.

[19] The Holy Synod of the Church of Greece, Bioethics Committee (2000) Press release, 17 August. Basic positions on the ethics of transplantation and euthanasia. (www.bioethics.org.gr)

խորհուրդը դեմ է էվթանազիայի ամեն մի ձևի, քանի որ դրա ընդունումը առողջապահական համակարգի նկատմամբ անվստահության է մղում:

Իսլամական կենսաէթիկան շարիաթի շարունակությունն է՝ հենված Ղուրանի և Սուննաների վրա[20]:

Իսլամական շատ երկրներում (ինչպես, օրինակ, Իրանում) էվթանազիայի վերաբերյալ օրենքները և կանոնները ծագումով մահմեդական շատ գիտնականներ սահմանում են իսլամական իրավագիտության դրույթներով: Դրանց առաջին, հիմնական և կարևոր աղբյուրը Ղուրանն է, որը մուսուլմանական համայնքում ունի ամենաառանցքային տեղ: Այդ հարցում էական են կրոնական կարծիքները, ինչպես նաև դեկրետները՝ սահմանված իսլամական գիտնականների կողմից, որոնք կոչվում են «մուֆթի ալազամ» (սունիներ) և «այաթոլլահ ալօզմա» (շիաներ): Մուսուլմանական փորձագետների և գիտնականների քննարկումների և համաձայնությունների հիման վրա են ստեղծվել իսլամական բարոյագիտության բժշկական կոդեքսները:

Ղուրանում առկա որոշ հատվածներ հնարավորություն են տալիս հասկանալ, թե ինչ դիրքորոշում ունի իսլամի սուրբ գիրքը էվթանազիայի վերաբերյալ: Օրինակ «Մի՛ վերցրու կյանքը, որը Ալլահը սուրբ է դարձրել» (Ղուրան 17.33), «Եթե ինչ-որ մեկը սպանություն է գործում, նա սպանություն կամ չարիք է տարածում երկրի վրա, դա կլինի այնպես, ասես նա սպանել է ամբողջ մարդկությանը» (Ղուրան 5.32)[21]:

1981 թ. Քուվեյթում հրավիրված իսլամական բժշկության միջ-ազգային առաջին համաժողովի ժամանակ լույս ընծայված բժշկական բարոյագիտության մահմեդական կոդեքսում նշվում է, որ բժիշկը պետք է ամեն կերպ փորձի կանխել մահը և նպաստի կյանքի պահպանմանը, այլ ոչ թե հակառակը՝ դադարեցնի այն: Նշված կոդեքսի 61-րդ հոդվածում ասվում է, որ մարդկային կյանքը սուրբ է, և այն չպետք է զուր տեղը ընդհատվի: Այդ իսկ պատճառով էլ բժիշկը չպիտի կասեցնի հիվանդի կյանքը՝ անկախ նրանից, թե դա հիվանդի խնամակալի կամ նույնիսկ անբուժելի հիվանդություն ու սաստիկ ցավեր ունեցողի խնդրանքն է:

*Իսլամական արդարադատությունը, որը հիմնվում է Ղուրանի համոզիչ մեկնաբանության վրա, չի ճանաչում կամավոր մահանալու մարդկային իրավունքը: Դա բխում է Ղուրանում առկա կարևոր գաղափարներից՝ **առաջին.** կյանքը սուրբ է, և ցանկացած պատճառ չի կարող ստիպել, որ մարդուն կյանքից զրկեն, **երկրորդ.** Ալլահը միայն գիտե թե, որքան պետք է մարդն ապրի, և ոչ ոք չի կարող միջամտել նրա գործերին: Այդ հարցում իսլամական բոլոր գիտնականները համակարծիք են և կտրականապես դեմ են էվթանազիային: Այսպիսով, առհասարակ մահմեդական աշխարհում էվ-թանազիան չի կարող գործածվել շատ պարզ պատճառով՝ այնտեղ օրենքը*

---

[20] *Islamic bioethics, Can. Med. Assoc. J 164:60-63.*

[21] *Սուրբ Ղուրան, Ե., 2006:*

հիմնվում է Ղուրանի վրա, և նրանց համար դրանից զատ ընդունելի այլ բան չկա:

Չնայած հինդուիստների և սիկհերի դավանական տարբերությանը, նրանք ամեն դեպքում հավատում են «կարմային» և նրանց բոլոր մտքերն և գործողությունները ունենում են հետևանքներ իրենց հաջորդ կյանքում, ուստի լավ «կարմայի» դեպքում մարդը լավ վերածնունդ է ունենում, իսկ վատի դեպքում, բնականաբար՝ վատ[22]: Մահը վերածննդի ճանապարհն է, իսկ անժամանակ վախճանը, ըստ նրանց, մեծ դժբախտություն է[23]: Էվթանազիան Հնդկաստանում անօրինական է եղել դեռևս անգլիական քրեական օրենսգրքի (1860 թ.) կիրառության ժամանակվանից[24], սակայն հասարակության մեջ կա ավանդույթ՝ ինքնասպանություն կատարել որոշակի խիստ պայմաններում. նկատի ունեն ինքնասպանության այն տարբերակը, երբ անբուժելի հիվանդը մահը համարում է իր համար մաքրագործման մի եղանակ, պիտի նախապես այդ մասին մտածի և այն իրականացնելիս թույլ չտա այնպիսի սխալներ, որ հանգեցնեն «վատ մահվան» (մահանալիս արտաթորելը, սրտխառնոցը կամ միզելը)[25]:

Ինչպես հինդուիզմի, այնպես էլ բուդդայականության պարագայում պաշտոնական դիրքորոշում չկա կենսաէթիկայի մի շարք խնդիրների վերաբերյալ: Բուդդայականությունը հիմնականում հենվում է այն երկրի մշակույթի վրա, որտեղ այն ընդունված է: Այդ պատճառով կյանքի և մահվան մասին ուսմունքներն իրարից տարբերվում են Հնդկաստանի, Տիբեթի, Թաիլանդի, Ճապոնիայի և Արևմուտքի բնակչության մեջ: Սակայն որոշ հայեցակետեր, այնու-ամենայնիվ, նույնն են բոլոր բուդդայականների համար: Նրանք ընդհանրապես բարոյական պահանջ և պարտավորություն չունեն կյանքը պահպանելու ամեն գնով և կարևորում են այն հանգամանքը, որ մահը պետք է դիմավորել պարզ մտքով: Այդ պատճառով նրանցից շատերը ցավազրկումը չեն ընդունում մահացու հիվանդությունների ժամանակ: Չեն ընդունում նաև էվթանազիան կամ սպանությունը՝ բարեգթությունից ելնելով[26]:

Հայ առաքելական եկեղեցին մերժում է էվթանազիայի որևէ դրսևորում՝ պասիվ թե ակտիվ, քանի որ այդ երևույթը հակասում է եկեղեցու վարդապետությանը և դավանաբանությանը: Հայոց եկեղեցու ականավոր ներկայացուցիչները դարեր շարունակ ժխտողական վերաբերմունք են ունեցել ինքնասպանության վերաբերյալ: Հայ հոգևոր սպասավորները քանիցս դատապարտել են այդ երևույթը: Էվթանազիայի անընդունելի

---

[22] **Coward H**, **Sidhu T.** *(2000) Bioethics for clinicians: Hinduism and Sikhism. Can. Med. Assoc. J 163:1167-1170, Firth S (2005) End-of-life: a Hindu view. Lancet 366:682-686.*

[23] *Desai PN (1988) Medical ethics in India. J Med. Phil 13:231-255.*

[24] *Mani RK (2006) End-of-life care in India. Intensive Care. Med. 32:1066-1068.*

[25] *Firth S (2005) End-of-life: a Hindu view. Lancet 366:682-686.*

[26] **Ratanakul P.** *(1988) Bioethics in Thailand: the struggle for Buddhist solutions. J Med Philos 13:301-31.2.*

լինելու մասին հայ եկեղեցու սպասավոր Ն. եպ. Շաքարյանը գրում է. «Այստեղ, ահա, թող հիշենք նաև մեր վերջին և քաջ հիվանդ ներկայացուցիչները՝ երջանկահիշատակ Վազգեն Ա և Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսները, քաջանուն հիվանդներ, քաղցկեղով մահացած, բայց և ոչ մեկ ժամանակ կյանք և մահ աստվածադիր օրենքից շեղված անուններ: Նրանք ոչ մի տրտունջ չցուցաբերեցին, այլ ընդհակառակը, ամեն մի ցավ և վիշտ տարան անմռունչ, ասել է՝ աներեր հավատքով և բարեպաշտի կեցվածքով: Այո, նրանք քաջ գիտեին, որ մարդկային կյանքը կյանք է նաև այս ցավատանջ ձևի մեջ, և չէր կարելի կյանքը պղծել ոչ մեկ ձևով: Կյանքի տվողն ու առնողը միայն Աստված է, և չի կարելի, որևէ մեկին էլ թույլատրված չէ իր կոշիկից վեր բարձրանալը»[27]:

Հայ առաքելական եկեղեցին իր պաշտոնական տեսակետը կենսաէթիկայի աստվածաբանության խնդիրների վերաբերյալ չի հրապարակել: Այժմ եկեղեցում մշակվում է այդպիսի խնդիրների վերաբերյալ հայեցակարգ:

Այսպիսով, տարբեր երկրներում այս երևույթի նկատմամբ առկա իրավաբանական հակասական գնահատականները պայմանավորված են բժշկական, բարոյագիտական, փիլիսոփայական, կրոնական հայացքների առանձնահատկություններով և պատմական փորձով:

ЭВТАНАЗИЯ В КОНТЕКСТЕ РАЗЛИЧНЫХ РЕЛИГИОЗНЫХ УЧЕНИЙ

ПОГОСЯН Л. А.

Резюме

Религиозные учения по-разному относятся к проблеме эвтаназии. Хотя и большинство традиционных учений активную эвтаназию считает неприемлемой, но при всем при этом допускает ее возможность с рядом оговорок. Убийство из милосердия лежит в основе концепции атеистического сознания. Ответ на вопрос о допустимости эвтаназии зависит от того, что именно считать смертью. Медицина все время отодвигает "границу смерти", разрабатывая способы возвращения к жизни больных, которые еще несколько лет назад считались безнадежными. Вера в бессмертие души и загробный мир ставит под

---

[27] **Շաքարյան Ն. եպս.,** *Էվթանազիա (Տարեգիրք, Աստվածաբանության ֆակուլտետի, 2011, թիվ 2, էջ 89):*

сомнение принципиальную возможность эвтаназии даже для тяжелобольного и испытывающего мучения человека.

EUTHANASIA IN THE CONTEXT OF VARIOUS RELIGIOUS NOTIONS

L. POGHOSYAN

Abstract

Death is one of the most important things that religions are concerned with. All faiths tend to provide explanations for death and dying. For those left behind when someone dies, religions provide rituals to mark death, and ceremonies to commemorate those who have died. Religions provide understanding and comfort for those facing death. Religions consider understanding death and dying to be vital to find meaning in human life. Dying is often seen as an occasion for getting powerful spiritual insights as well as for preparing for whatever afterlife may be to come. Therefore, it is not surprising that all faiths have strong views on euthanasia.